«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծեր

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 2-րդ հոդվածում լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«**առևտրի իրականացման վայրի փակ վաճառատեղ՝** առուվաճառքի պայմանագրով գործարքներ կատարելու համար օգտագործվող տեղ, որն ունի տանիք և առանձնացված է պատերով կամ գտնվում է շինության ներսում.

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասում լրացնել նոր ե) կետ հետևյալ բովանդակությամբ.

«ե) տարածքի անվտանգությունն ապահովող անձնակազմով։»։

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածում՝

«1) 1-ին մասի ա) կետում «կատարումը.» բառից հետո լրացնել «, ինչպես նաև սանիտարական, հակահրդեհային կանոններով սահմանված պահանջները» բառերով։

2) 1-ին մասում լրացնել նոր ը), թ), ժ) կետեր հետևյալ բովանդակությամբ.

«ը) Ինտերնետային կայքի առկայությունը։ Ինտերնետային կայքում ոչ ուշ, քան ամսական պարբերականությամբ հրապարակվում է առևտրի իրականացման վայրի հատակագիծը՝ ըստ համարակալված վաճառատեղերի, որը պարունակում է նշում ինչպես զբաղեցված, այնպես էլ ազատ վաճառատեղերի վերաբերյալ.

թ) փակ վաճառատեղերում և ապրանքային պահեստներում (առկայության դեպքում) ապրանքներն անվնաս, առանց ապրանքային տեսքի և սպառողական հատկանիշների կորստի պահելու հնարավորությունը.

ժ) վաճառատեղի (այդ թվում՝ առևտրի օբյեկտի) տրամադրման համար սույն օրենքով նախատեսված պայմանների ապահովման նպատակով լրացուցիչ վճարներ չգանձելը։»։

3) Ուժը կորցրած ճանաչել 1-ին մասի է) կետը։

4) 3-րդ մասի 1-ին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ.

«Առևտրի իրականացման վայրի կազմակերպիչը վաճառատեղերը (այդ թվում՝ առևտրի օբյեկտները) վճարովի կամ անհատույց օգտագործման է տրամադրում իր ինտերնետային կայքում հրապարակային օֆերտա ներկայացնելու միջոցով։ Հրապարակային օֆերտան պետք է պարունակի տեղեկություններ յուրաքանչյուր վաճառատեղի (առևտրի օբյեկտի) մակերեսի և վճարի չափի, ինչպես նաև սույն օրենքի 7-րդ հոդվածի ը), թ) և ժ) կետերով նախատեսված պայմանների վերաբերյալ։»։

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 158-րդ հոդվածում լրացնել նոր 35-38-րդ մասեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«Առևտրի իրականացման վայրի կազմակերպչի կողմից ինտերնետային կայքում ոչ ուշ, քան ամսական պարբերականությամբ առևտրի

իրականացման վայրի հատակագիծը՝ ըստ համարակալված և ինչպես զբաղեցված, այնպես էլ ազատ վաճառատեղերի չհրապարակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով։

Առևտրի իրականացման վայրի կազմակերպչի կողմից վաճառատեղի (այդ թվում՝ առևտրի օբյեկտի) տրամադրման համար «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված պայմանների ապահովման նպատակով լրացուցիչ վճարներ գանձելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով։

Առևտրի իրականացման վայրի կազմակերպչի կողմից վաճառատեղերը (այդ թվում՝ առևտրի օբյեկտները) առանց իր ինտերնետային կայքում հրապարակային օֆերտա ներկայացնելու միջոցով վճարովի կամ անհատույց օգտագործման տրամադրելը կամ «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հրապարակային օֆերտային ներկայացվող պահանջները չպահպանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով։

Սույն հոդվածի 35-37-րդ մասերով նախատեսված արարքները վարչական տույժի նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով։

Հոդված 2 Օրենսգիրք 244.7 հոդվածի 1-ին մասում «և 26-րդ» բառերը փոխարինել «, 26-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ և 38-րդ» բառերով։

ՀՈԴՎԱԾ 3. Եզրափակիչ մաս

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը։